

# ՏԵԱՌՆՆԴԱՌԱԶԻ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ

- ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՆԹԻՔԸ Զ.Մ.Ը.Մ.Ի  
ՍԿԱՌՏԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԶԵՏ

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, 14 Փետրուարը Տեառնընդառաջի տօնն է, տօն մը, որ կը յիշատակէ Մանուկ Յիսուսի տաճար ընծայումը:

Ինչպէս աշխարհի բոլոր շրջաններու հայութիւնը, նոյնպէս ալ մեր Թեմի հաւատացեալ գաւակները Երկուշաբթի, 13 Փետրուարին, յատուկ արարողութիւններով ու աւանդական հանդիսութիւններով նշեցին Տեառնընդառաջի նախատօնակը: Այս առիթով, ու Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինութեամբ, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ տօնին յատուկ ժամերգութիւն, որուն յաջորդեց աւանդական խարոյկի հանդիսաւոր արարողութիւնը:

Առաջնորդ Սրբազանը հանդիսապետեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեանց, որոնց մասնակից եղան Ազգային Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Յոգշ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն ու բազմահարիւր հաւատացեալներ: Ներկայ էին Ազգային Վարչութեան, եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ եւ այլ ներկայացուցչական դէմքեր:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով ներկայ հաւատացեալներուն ուղղեց իր պատգամը, որուն բնաբանն էր «ծնեալն ի Ս. կուսէն ընկալցուք ի սիրտս մեր հաւատով»: Ան յիշեցուց, որ Աստուածորդին իր երկրաւոր առաքելութիւնը կատարեց Երկնաւոր Յօր օրէնքներուն հետեւելով, մարդկութեան տալով օրէնքին աստուածային օրէնքներուն հնազանդելու օրինակ մը: Ան նաեւ վեր առաւ աստուածային լոյսին կարելորութիւնը, իբրեւ մեր կեանքերը լուսաւորող ու բարիին առաջնորդող գործօն, ընդգծելով, որ Զրիստոս նաեւ աշխարհին լոյսն է ու աստուածային լոյսին տարածիչը: «Լոյսն է որ մեզ իմաստուն կը դարձնէ եւ մեր կեանքը կը լուսաւորէ, մեզ կը վերածէ լոյսի որդիներու: Եւ Աստուած կ'օրինէ այս ճամբուն հետեւողները», ըսաւ Առաջնորդ Սրբազանը, եւ յատկապէս ողջունեց ներկայ Զ.Մ.Ը.Մ.ական սկաւաւտներն ու արեւոյշները, որոնք աւանդաբար ներկայ կ'ըլլան այս արարողութեան:

Աւարտին, Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան երգեց Տեառնընդառաջի յատուկ տաղը՝ «Զրիստոս փառաց թագաւոր»ը, զոր յօրինած է պատմահայր Մովսէս Խորենացի, մինչ քահանայ հայրերը, Յիսուս Մանուկի տաճար ընծայման օրինակով, հաւատացեալներու գաւակները կը դարձնէին Ս. խորանին շուրջը:

## ԽԱՐՈՅԿ

Եկեղեցական արարողութենէն ետք, հոգեւորականաց դասը, «Ուրախ Լեր» շարականին երգեցողութեամբ դուրս եկաւ եկեղեցիէն եւ ուղղուեցաւ եկեղեցւոյ բակը, ուր տեղի ունեցաւ խարոյկի հրավառութիւնը, ներկայութեամբ ու մասնակցութեամբ Առաջնորդ Սրբազանին, հոգեւոր հայրերուն ու հաւատացեալ ժողովուրդին: Հանդիսաւոր այս արարողութեան կազմակերպումն ու կարգապահութեան հսկողութիւնը վստահուած էր Զ.Մ.Ը.Մ.ական սկաւաւտներուն: Ակններեւ էր խանդավառութիւնը մանաւանդ ներկայ երիտասարդներուն, որոնք գործնապէս մասնակից կ'ըլլային հաւանաբար մեր ժողովուրդին չափ հին աւանդութեան մը կատարման, ցատկելով խարոյկին վրայէն: Կիսամութ բակը կը

լուսաւորուէր խարոյկին բոցով ու զայն շրջապատող հաւատացեալներուն մոմերով...

Խարոյկին շուրջ տեղի ունեցաւ երգեցողութիւն: Հոգեւոր Հայրերն ու ներկաները երգեցին Վարդանանց Տօնին նուիրուած, ինչպէս նաեւ ազգային հայրենասիրական երգեր: Պաշտօնական բաժինը վերջ գտաւ »Մեր Հայրենիք«, »Յառաջ Նահատակ« քայլերգներով եւ »Կիլիկիա«ով: Ներկայ հաւատացեալները մոմեր ու կանթեղներ ի ձեռին ուղղուեցան տուն, մեր դարաւոր աւանդութեանց ու քրիստոնեական հաւատքին լոյսը տանելով իրենց հետ:

## **ԸՆԹՐԻՔ**

Չոյգ արարողութիւններէն ետք, Առաջնորդ Սրբազանը, հոգեւորականաց դասու անդամները, Ազգային Վարչութեան ներկայացուցիչներն ու Հ.Ս.Ը.Ս.ի սկաուտները համախմբուեցան եկեղեցւոյ սրահը, ուր տեղի ունեցաւ սիրոյ սեղան, հիւրընկալութեամբ Հ.Ս.Ը.Ս.ին: Հանդիսավարն էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան:

Մթնոլորտը մտերմիկ էր ու գօտեպնդող: Յանուն Հ.Ս.Ը.Ս.ին ներկաները ողջունեց Յրայր Պոյաճեան եւ շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, որ այս գեղեցիկ առիթը ընծայած է իրենց: Ապա ան ներկայացուց խմբապետները եւ շրջաններու ներկայացուցիչ սկաուտներն ու արեւոյշները:

Խօսք առաւ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, որ հակիրճ բայց ըստ բաւականին ամբողջական պատկերով մը ներկայացուց Տեառնընդառաջի տօնին խորհուրդը, անոր կապուած աւանդութիւններն ու մեր ժողովուրդի նախաքրիստոնեական դարերէն ի վեր պահպանուող այն բարքերը, որոնք որդեգրուած են յետ քրիստոնեացման: Յաջորդեց հարց-պատասխանի պահ մը:

Եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը, գնահատելով Հ.Ս.Ը.Ս.ական սկաուտներն ու խրախուսելով զանոնք: Առաջնորդ Սրբազանը ներկաներուն յանձնեց յուշանուէրներ, ապա, երեկոն փակուեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի քայլերգին խմբերգումով եւ »Պահպանիչ« աղօթքով:

## **Eve of the Feast of the Presentation of Jesus Christ in Western Prelacy Churches**

### **- Prelate's traditional dinner with H.M.E.M. Scout leaders**

According to our church calendar February 14 is the Feast of Dyarntarach, a feast that symbolizes the dedication of the Lord to the temple.

On Monday, February 13 Armenians in all parts of the world as well as the Western Prelacy faithful celebrated this feast with unique ceremonies and traditional celebrations. On this occasion and under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, special services took place in all the Prelacy churches followed by the traditional lighting of the bonfire.

The Prelate, joined by Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, pastors of St. Mary's and throngs of faithful, presided over

services at Glendale's St. Mary's Church. Also present were members of the Executive Council and representatives of various organizations.

The theme of the Prelate's sermon was the acceptance of Jesus Christ into our hearts with faith. He reminded the faithful that Christ fulfilled his earthly mission by complying with the Lord's Divine law, thus setting an important example for mankind. He also spoke of the significance of the heavenly light as the illumination for our lives and the force that will lead us to goodness; "It is the light which makes us wise and brightens our lives, transforming us into enlightened servants," said the Prelate and added that the Good Lord blesses those who follow in this path. He then welcomed the H.M.E.M. scouts who are traditionally present at this ceremony.

At the conclusion of the service, clergy members took children of the faithful around the altar following the example of Jesus being presented to the temple, while Very Rev. Fr. Barthev Gulumian sang a centuries old hymns unique to this feast.

Following the church services, the Prelate, clergy members, and faithful gathered in the church courtyard to light the bonfire. The organizing and supervision of the bonfire was entrusted to the H.M.E.M scouts. The joy among the youth was apparent as they participated in this centuries old tradition by jumping over the fire. Those gathered around the fire then joined the clergy in the singing of songs dedicated to St. Vartan and also nationalistic songs, after which they headed home, lit candles in hand.

After the bonfire ceremony, Archbishop Mardrossian, members of clergy, Executive Council representatives, and H.M.E.M. scouts gathered at the church hall where a reception was held, organized by H.M.E.M. The master of ceremonies was Rev. Fr. Vazken Atmajian of St. Mary's Church. Mr. Hrair Boyadjian of H.M.E.M. welcomed the guests and expressed thanks to the Prelate for offering them this opportunity, then introduced the scout leaders and representatives from different regions. Very Rev. Fr. Barthev Gulumian briefly spoke about the meaning of Dyarntarach and the traditions associated with it, followed by a question and answer session.

In his closing remarks, the Prelate praised and encouraged the H.M.E.M. scouts. He then presented the guests with mementos after which the evening came to an end with the singing of the H.M.E.M. anthem followed by "Bahbanich" prayer.